ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9 օգոստոսի 2023 թվական քաղաք Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի՝ Սուսաննա Զաքարյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի և Երևանի քաղաքապետարանի՝ հայցվորի իրավունքին միջամտության ոչ իրավաչափ և ոչ համաչափ լինելու հիմքով «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի թիվ 109/58298-23 գրություն-ծանուցումներն ու պայմանագրի նախագիծն անվավեր ճանաչելու պահանջի մասին, թիվ ՎԴ/4770/05/23 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2023 թվականի հուլիսի 24-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Սուսաննա Զաքարյանը 2023 թվականի հունիսի 16-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի և Երևանի քաղաքապետարանի՝ հայցվորի իրավունքին միջամտության ոչ իրավաչափ և ոչ

համաչափ լինելու հիմքով «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի թիվ 109/58298-23 գրություն-ծանուցումներն ու պայմանագրի նախագիծն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2023 թվականի հունիսի 26-ի որոշմամբ, գործը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2023 թվականի հուլիսի 24-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին:

4. Գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2023 թվականի օգոստոսի 3-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները</u>.

5. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածին, 78-րդ հոդվածի 2-րդ մասին, 81-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածին «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածին, 3-րդ հոդվածի 1-ին մասին, 9-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ մասերին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԱՔԴ/0433/02/11 գործով 2011 թվականի հուլիսի 27-ին, թիվ ՎԴ/0830/05/14 գործով 2016 թվականի ապրիլի 24-ին արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ ՀՀ վարչական դատարանը 2023 թվականի հունիսի 26-ի որոշմամբ գործը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) [Մ]ույն դեպքում հայցվորի կողմից ներկայացված պահանջը բխում է քաղաքացիաիրավական հարաբերություններից, քանի որ իրավահարաբերության կողմերից մեկում հանդես է գալիս հայցվոր ֆիզիկական անձ Սուսաննա Ռուբենի Ջաքարյանը, իսկ մյուս կողմում՝ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ը, իսկ վերջիններիս միջև վեճը վերաբերում է քաղաքացիաիրավական պայմանագրային հարաբերություններին:*

Այսպիսով, հայցվոր Սուսաննա Ռուբենի Ջաբարյանի ներկայացված պահանջը ՀՀ վարչական դատարանին ընդդատյա լինել չի կարող»[1]:

6. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 26-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ և 7-րդ մասերին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածին, ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից նախկինում կայացրած որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2023 թվականի հուլիսի 24-ի որոշմամբ գտել է, որ. *«(…) Տվյալ դեպքում, թեև սույն հայցադիմումում առկա են անհատականություններ ինչպես հայցի առարկայի և հիմքերի մասով, այնպես էլ դատավարության մասնակիցների կազմի մասով, որոնք սակայն, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, կարող են մասնանշվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածով սահմանված կարգով, այնուամենայնիվ, ներկայացված հայցադիմումի շրջանակում հնարավոր չէ միանշանակ, կատեգորիկ արձանագրել, որ վեճը վերաբերում է քաղաքացիաիրավական պայմանագրային հարաբերություններին, քանի որ համաձայն սույն հայցադիմումի և կից փաստաթղթերի՝ հայցվոր Սուսաննա Ջաբարյանին սեփականության իրավունքով պատկանող Երևանի 33-րդ թաղամասի, Խանջյան փողոցի 1-ին նրբանցքի 5/13 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ ՀՀ Կառավարության որոշմամբ ճանաչվել է բացառիկ հանրային գերակա շահ, իսկ Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ը հայցվորին է ներկայացրել «անշարժ գույքը հանրության գերակա շահերի ապահովման նպատակով վերցնելու և փոխհատուցում վճարելու մասին» պայմանագրի նախագիծ, և հայցվորն ըստ էության վիճարկում է ՀՀ Կառավարության որոշման հիման վրա լիազոր մարմինների կողմից իրականացվող ողջ գործընթացի իրավաչափությունը:*

[1] Տե՛ս դատական գործը, թերթեր 30-34:

Ավելին, «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանում կարող է քննության առարկա լինել ձեռքբերողի կողմից սեփականության օտարման հայցով դատարան դիմելուց հետո միայն փոխհատուցման չափի հարցը, որը տվյալ դեպքում բացակայում է:

Արդյունքում, ամբողջ վերոգրյալի համադրմամբ բացահայտելով կողմերի իրավահարաբերությունների բովանդակությունը՝ ստացվում է, որ սույն հայցի հիմքում ընկած իրավահարաբերությունը քաղաքացիաիրավական չէ, և դատավարության մասնակիցների կազմի թերի լինելը դեռևս չի նշանակում, որ վեճը քաղաքացիաիրավական բնույթի է, և սույն հայցադիմումը, առնվազն ներկայացված տեսքով, չի վերաբերում քաղաքացիաիրավական պայմանագրային հարաբերություններին, քանի որ հայցվորն ըստ էության վիճարկում է հանրային գերակա շահ ճանաչելու մասին ՀՀ Կառավարության որոշման հիման վրա պետա-իշխանական լիազորությամբ օժտված մարմինների կողմից կատարվող գործողությունների իրավաչափությունը, այլ ոչ թե «քաղաքացիաիրավական պայմանագրի» դրույթների հետ կապված հարցեր:

Այլ կերպ ասած՝ սույն հայցի հիմքում ընկած իրավահարաբերությունը վարչաիրավական է, քանի որ անմիջականորեն ծագում է ՀՀ Կառավարության որոշման հիման վրա /բացառությամբ ձեռքբերողի կողմից սեփականության օտարման հայցով դատարան դիմելուց հետո միայն փոխհատուցման չափի հարցի որոշման/, հետևաբար, դրանից բխող, դրան հաջորդող՝ լիազորված մարմինների կողմից գործողությունների կամ անգործության իրավաչափությունը որոշելը, վիճարկումը, պարտավորեցումը, գործողության կատարումը կամ ձեռնպահ մնալը, պետք է քննվեն վարչական դատավարության կարգով, իսկ թերությունները շտկվեն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի հիմքով, որպիսի պայմաններում սույն հայցը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»[2]:

<u>Վճռաբեկ դատարանի նախագահի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

[2] Տե՛ս դատական գործը, թերթեր 39-42:

7. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավո՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի եզրահանգումն այն մասին, որ թիվ ՎԴ/4770/05/23 գործն ըստ հայցի՝ Սուսաննա Ռուբենի Զաքարյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի և Երևանի քաղաքապետարանի՝ հայցվորի իրավունքին միջամտության ոչ իրավաչափ և ոչ համաչափ լինելու հիմքով «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի թիվ 109/58298-23 գրություն-ծանուցումներն ու պայմանագրի նախագիծն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:*

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝ վարչական դատարանը, (...)»:*

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի:*

2. Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի (...)»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, (...)»:*

Նույն օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ փվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության»:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քաղաքացիական օրենադրությունը, ինչպես նաև քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերը և Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշումները (այսուհետ՝ այլ իրավական ակտեր) սահմանում են քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ բացառիկ իրավունքների (մտավոր սեփականություն) ծագման հիմքերն ու իրականացման կարգը, կարգավորում են պայմանագրային և այլ պարտավորություններ, ինչպես նաև այլ գույքային ու դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերություններ: (...)»:*

«Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 5.1 հոդվածի համաձայն՝ *«1. Եթե սեփականատերը սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված կարգով պահանջ է ներկայացնում սեփականության չօտարվող մասը ևս օտարելու վերաբերյալ, ապա ձեռք բերողը պարտավոր է նման պահանջ ներկայացնելուց հետո՝ 15 օրվա ընթացքում, սեփականատիրոջը ներկայացնել իր դիրքորոշումը:*

2. Ձեռք բերողի կողմից սեփականության չօտարվող մասը ձեռք բերելուց հրաժարվելու դեպքում սեփականատերն իրավունք ունի սեփականության չօտարվող մասը օտարելուն պարտադրելու պահանջով դիմելու դատարան՝ ձեռք բերողի մերժումը ստանալուց կամ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով դատարան ներկայացված հայցը դատարանը պետք է քննի և վճիռ կայացնի այն ստանալու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում»:

Նույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Եթե ձեռքբերողի կողմից փոխհատուցման գումարը դեպոզիտ հանձնելուց հետո՝ յոթ օրվա ընթացքում, չի կնքվում օտարման պայմանագիրը կամ սույն օրենքի 12-րդ հոդվածի համաձայն*

սեփականությունը չի օտարվում, ապա ձեռքբերողը պարտավոր է մեկամսյա ժամկետում սեփականության օտարման հայցով դիմել դատարան: Այս դեպքում դատարանի քննարկման առարկա կարող է լինել միայն փոխհատուցման չափի հարցը»:

9. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Արևիկ Արուչյանն ընդդեմ «ՀԷԳ-90» ՍՊԸ-ի և Դանիել Գրիգորյանի* քաղաքացիական գործով 2011 թվականի հուլիսի 27-ի որոշմամբ՝ արձանագրելով հետևյալը. *«(…) [Մ]նձը ՀՀ վարչական դատարան դիմելու իրավունք է ձեռք բերում այն դեպքում, երբ համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել իր իրավունքները և ազատությունները, կամ երբ նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն, կամ երբ նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության, սակայն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից անձի իրավունքների և ազատությունների խախտման փաստը միայն դեռևս բավարար չէ ՀՀ վարչական դատարան դիմելու համար, քանի դեռ այդպիսի խախտման հետևանքով առաջացող դատական գործը չի ծագում հանրային իրավահարաբերությունից: Հանրային իրավահարաբերություններն այն իրավահարաբերություններն են, որոնք ծագում են պետական մարմինների իրականացրած գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում: Այսինքն՝ այդպիսի իրավահարաբերությունները և դրանց արդյունքները պետք է ունենան հանրային՝ համընդհանուր բնույթ, ի տարբերություն մասնավոր՝ կոնկրետ անձին վերաբերող, իրավահարաբերության (…)»*[3]*:*

Վերը նշված հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության* վարչական գործով՝ 2016 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ արձանագրելով հետևյալը. *«(…) [Հ]անրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ տարրերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ*

[3] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արևիկ Արուչյանն ընդդեմ «ՀԷԳ-90» ՍՊԸ-ի և Դանիել Գրիգորյանի* թիվ ԵԱՔԴ/0433/02/11 քաղաքացիական գործով 2011 թվականի հուլիսի 27-ի որոշումը:

բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը: Իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնապար անձիք, այդ թվում պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ: (...) [Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները (...)»[4]:

Վճռաբեկ դատարանը, ամփոփելով վերը նշված դիրքորոշումները, մեկ այլ՝ *Գոռիշիան Իշիկյանն ընդդեմ ««ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ի և ՀՀ Կառավարության աղրնթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության, երրորդ անձ Հոիփսիմե Իշիկյանի* քաղաքացիական գործով 2016 թվականի ապրիլի 22-ին կայացված թիվ ԵՄԴ/1029/02/14 որոշմամբ հավելել է, որ *«հանրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները: Իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.*

[4] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *«Վեար» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության* թիվ ՎԴ/0830/05/14 վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի որոշումը:

1. արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե՝ ոչ,

2. արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՝ ոչ,

3. արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՝ ոչ:

Միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչպես նաև այդ հարաբերությունից բխող վեճերի ընդդատության հարցը՝ հաշվի առնելով նաև այն կարևոր հանգամանքը, որ հանրային հարաբերություններից բխող բոլոր վեճերը չեն, որ վերապահված են վարչական դատարանի քննությանը, քանի որ ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի (...) ենթակայությանը վերապահված գործերը, ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, ինչպես նաև պարտի կատարման հետ կապված գործերը»[5]*:*

Մեկ այլ որոշմամբ վերահաստատելով վերը նշված դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով իրավահարաբերության բնույթը պարզելու նպատակով կիրառվելիք մեխանիզմներին, *Լուսինե Սահակյանն ընդդեմ ՀՀ փաստաբանների պալատի* քաղաքացիական գործով 2022 թվականի մայիսի 13-ի որոշմամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը. «*Իրավահարաբերության բնույթը պարզելու համար հարկավոր է այն դիտարկել շահերի տեսության, ենթակարգության տեսության և հատուկ իրավունքի տեսության համատեքստում:*

Ըստ շահերի տեսության՝ հանրային իրավունքը մասնավորից տարբերվում է այն շահի տեսակով, որը պաշպանվում է առանձին իրավանորմով: Այն իրավանորմերը,

---

[5] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գոռիշիան Իշիկյանն ընդդեմ ««ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ի և ՀՀ կառավարության աղընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության, երրորդ անձ Հոիփսիմե Իշիկյանի* թիվ ԵՄԴ/1029/02/14 քաղաքացիական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի որոշումը:

որոնք ծառայում են հանրային կամ ընդհանուր շահին, պատկանում են հանրային իրավունքին: Մինչդեռ, մասնավոր իրավանորմերը ծառայում են մասնավոր կամ անհատական շահերին:

Ենթակարգության տեսությունը ելնում է մասնակիցների հարաբերությունների բնույթից և կիրառվում է միայն այն դեպքում, երբ հարաբերության մասնակիցներն են մի կողմից պետությունը, իսկ մյուս կողմից քաղաքացին: Ըստ այս տեսության՝ այն իրավանորմերը, որոնք կարգավորում են հանրային իշխանությունը կրողների գործողությունները, համարվում են հանրային-իրավական, երբ դրանք վերաբերում են վերադասության-ենթակայության հարաբերությանը: Եթե մասնակիցների միջև առկա է վերադասության-ենթակայության հարաբերություն, ապա իրավահարաբերությունը հանրային է, իսկ եթե իրավունքի երկու սուբյեկտները միմյանց առջև հանդես են գալիս իրավահավասար կերպով, ապա առկա են մասնավոր-իրավական հարաբերություններ:

Հատուկ իրավունքի տեսությունն իր հերթին նույնպես կոչված է պարզելու վեճի հանրային-իրավական բնույթը: Այն ելնում է վեճը լուծող իրավանորմերի իրավական բնույթից: Ըստ այս տեսության՝ եթե վեճը լուծվում է հանրային-իրավական նորմերի միջոցով, ապա առկա է հանրային-իրավական վեճ, իսկ եթե վեճը լուծում են մասնավոր-իրավական նորմերը, ապա կունենանք մասնավոր-իրավական վեճ:

Վերոնշյալ տեսությունների հիմքում դրված չափանիշներից ելնելով՝ անհրաժեշտ է անդրադառնալ հետևյալ հարցերին.

- *որ նորմերն են լուծում վեճը,*
- *արդյո՞ք դրանք հանրային-իրավական նորմեր են (ինչ շահերի պաշտպանությանն են ուղղված այդ նորմերը),*
- *արդյո՞ք իրավահարաբերության մասնակիցների միջև առկա է վերադասության-ենթակայության հարաբերություն»[6]:*

10. Սույն որոշման 8-րդ և 9-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից և մեջբերված իրավական դիրքորոշումներից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերի քննությունը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Լուսինե Սահակյանն ընդդեմ ՀՀ փաստաբանների պալատի* թիվ ԵԴ/35635/02/19 քաղաքացիական գործով 2022 թվականի մայիսի 13-ի որոշումը:

դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Այսինքն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Վկայակոչված կարգավորումներից հետևում է նաև, որ քաղաքացիական շրջանառության մասնակիցների գույքային իրավունքների ծագման հիմքերն ու իրացման կարգը սահմանված են քաղաքացիական օրենսդրությամբ, իսկ այդ հարաբերություններից ծագող վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում:

11. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Սուսաննա Զաքարյանը 2023 թվականի հունիսի 16-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի և Երևանի քաղաքապետարանի՝ հայցվորի իրավունքին միջամտության ոչ իրավաչափ և ոչ համաչափ լինելու հիմքով «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի թիվ 109/58298-23 գրություն-ծանուցումներն ու պայմանագրի նախագիծն անվավեր ճանաչելու պահանջի մասին[7],

- ՀՀ վարչական դատարանը 2023 թվականի հունիսի 26-ի որոշմամբ գործը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ սույն դեպքում հայցվորի կողմից ներկայացված պահանջը բխում է քաղաքացիաիրավական հարաբերություններից, քանի որ իրավահարաբերության կողմերից մեկում հանդես է գալիս հայցվոր ֆիզիկական անձ Սուսաննա Զաքարյանը, իսկ մյուս կողմում՝ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ը, իսկ վերջիններիս միջև վեճը վերաբերում է քաղաքացիաիրավական պայմանագրային

[7] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

հարաբերություններին, որպիսի պայմաններում հայցվոր Սուսաննա Զաքարյանի ներկայացրած պահանջը ՀՀ վարչական դատարանին ընդդատյա լինել չի կարող[8],

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, համապատասխան նորմերի վերլուծության արդյունքում եզրահանգել է, որ սույն հայցի հիմքում ընկած իրավահարաբերությունը քաղաքացիաիրավական չէ, դատավարության մասնակիցների կազմի թերի լինելը դեռևս չի նշանակում, որ վեճը քաղաքացիաիրավական բնույթի է, և հայցադիմումը, առնվազն ներկայացված տեսքով, չի վերաբերում քաղաքացիաիրավական պայմանագրային հարաբերություններին, քանի որ հայցվորն ըստ էության վիճարկում է հանրային գերակա շահ ճանաչելու մասին ՀՀ Կառավարության որոշման հիման վրա պետա-իշխանական լիազորությամբ օժտված մարմինների կողմից կատարվող գործողությունների իրավաչափությունը, այլ ոչ թե «քաղաքացիաիրավական պայմանագրի» դրույթների հետ կապված հարցեր[9]:

12. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-10-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նկատել, որ տվյալ դեպքում հայցվորը, դիմելով ՀՀ վարչական դատարան, խնդրել է իր իրավունքին միջամտության ոչ իրավաչափ և ոչ համաչափ լինելու հիմքով անվավեր ճանաչել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի թիվ 109/58298-23 գրություն-ծանուցումներն ու պայմանագրի նախագիծը: Տվյալ դեպքում հանրային իշխանական լիազորություններով չօժտված սուբյեկտի՝ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի կողմից Սուսաննա Զաքարյանին թիվ 109/58298-23 գրություն-ծանուցում է ուղղվել այն մասին, որ ՀՀ Կառավարության 22.03.2018 թվականի թիվ 332-Ն որոշմամբ Երևան քաղաքի 33-րդ (Ֆիրդուսի) թաղամասի կառուցման նպատակով վերջինիս սեփականության իրավունքով պատկանող՝ Խանջյան փողոցի 1-ին նրբանցքի թիվ 5/13 հասցեում գտնվող անշարժ գույքի (բնակելի տան) նկատմամբ ճանաչվել է հանրության գերակա շահ և այն ենթակա է իրացման՝ համապատասխան փոխհատուցմամբ: Սուսաննա Զաքարյանին տրամադրվել է «Անշարժ գույքը հանրության գերակա շահերի

[8] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

ապահովման նպատակով վերցնելու և դրա դիմաց փոխհատուցում վճարելու մասին» պայմանագրի նախագիծը:

«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ը չի հանդիսանում հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ, վերջինիս կողմից Սուսաննա Զաքարյանին ուղղված գրություն-ծանուցումը կապված չէ հանրային-իշխանական (գործադիր-կարգադրիչ) գործառույթների իրականացման հետ, և այն ուղղված է ոչ թե հանրային շահի իրացմանը, այլ քաղաքացիաիրավական (մասնավոր) հարաբերությունների կարգավորմանը:

Գործում առկա փաստական հանգամանքների և վերոգրյալ իրավական վերլուծությունների համատեքստում հարկ է նշել, որ ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցադիմումով բարձրացվել են իրացվող գույքի ծավալի և ձեռքբերողի կողմից առաջարկվող փոխհատուցման գումարի չափի հետ կապված հարցեր, ինչից հետևում է, որ վիճելի իրավահարաբերությունը վերաբերում է սեփականության օտարման/ձեռքբերման գործարք կնքելուն և/կամ սեփականության օտարման/ձեռքբերման պահանջ ներկայացնելուն, որպիսի իրավական վեճը բխում է ոչ թե հանրային, այլ մասնավոր իրավահարաբերություններից:

13. Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/4770/05/23 գործն ըստ հայցի՝ Սուսաննա Ռուբենի Զաքարյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի և Երևանի քաղաքապետարանի՝ հայցվորի իրավունքին միջամտության ոչ իրավաչափ և ոչ համաչափ լինելու հիմքով «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի թիվ 109/58298-23 գրություն-ծանուցումներն ու պայմանագրի նախագիծն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին, հիմնավոր չէ:

Վերոգրյալի հիման վրա՝ գտնում եմ, որ Սուսաննա Ռուբենի Զաքարյանի հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ/4770/05/23 գործը ենթակա է Երևան

քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ՎԴ/4770/05/23 գործն ըստ հայցի՝ Սուսաննա Ռուբենի Զաքարյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի և Երևանի քաղաքապետարանի՝ հայցվորի իրավունքին միջամտության ոչ իրավաչափ և ոչ համաչափ լինելու հիմքով «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի թիվ 109/58298-23 գրություն-ծանուցումներն ու պայմանագրի նախագիծն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ